

որ յառաջագոյն լեալ էր յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն կուր, այնուհետեւ յինքն վտարեալ, դառնայր անտի⁴: Բայց մի քանի տարի վերջը Հայաստան ինքը դժբախտաբար աւելի մեծ ճնշումի ենթարկուեց. նա 387ին բաժին բաժին եղաւ իր հօր դրացիներէ մէջ եւ այնուհետեւ Վերահայրը կողմնակի դարձաւ Բիւզանդեան կայսրութեան եւ Պարսկաստանի մէջ:

Եղաւ ժամանակ, որ նա իշխանաւորներէ ազլկան համար հարսանեկան օժիտի դեր էր կատարում: Գ. դարում Վրաց առաջին քրիստոնէայ թագաւորը Միրիան որ հայ ձեռագիրներում յիշուած է նաեւ «Միհրդատ» ձևով (364—379) Մէսիսէթին այն է Վերահայրը յատկացրեց իր ազլկան փեսացուին: Իսկ Պարսկական տիրապետութեան միջոցին պարսիկ մարդանոց երբ իր ազլիկը տուաւ Վրաց թագաւոր Արշիլի որդուն, որ իր հարկատուն էր, Վերահայրը բաժին նշանակեց իրբն օժիտ:

Քաղաքական կեանքի այս փոփոխութիւններէ հետ, Վերահայրէ մէջ ներքին փոփոխումներ եւս են կատարուել, որոնք դարերի ընթացքում յեղաշրջել են բնակիչներէ ցեղական կազմը: Երկրի հին բնիկները հայկական տիրապետութեան ժամանակ ձուլուել են հայութեան մէջ: Այս նախնական ցեղերի մասին Մ. Էմինը գրում է. «Տայքի եւ Գուգարքի մէջ շատ զօրաւոր է եղել հնդկարիական տարրը: Միայն այդ տարրի ներկայութեամբ կարելի է բացատրել շատ դաւանների անունները՝ փոր վերջաւորութեամբ, որ սանկրիտերէն բաղաժ է» նշանակում⁵: Սորենացու Աշխարհապարտութեան մէջ հայերէն այս փոր վերջաւորութեան տեղերը՝ վրացերէնում խլիլի են վերածուած, որ ձոր է նշանակում. ինչպէս հայ. Մանգղեացիոր = վրաց. Մանգլիս-խլիլի, հայ. Բողմուփոր = վրաց. Բոլմիս(իս)-խլիլի եւ այլն. «Հին վրացի թարգմանիչները, գրում է վրացի հեղինակ Ի. Ջաւախով, հայկական գաւառ բառը, որ խկապէս ձոր չէ նշանակում, վրացերէնում վերածել են խլիլի, այսինքն ձոր են թարգմանել: «Գաւառապետ» բառը վրացերէնում թարգմանուած է «ձորապետ» (խլիլի-թալիլի): Սրա պատճառն այն է, որ Վրաստան՝ իրբն լեռնային եր-

⁴ Փաւստոս, Թիֆլիս 1912, էջ 315:
⁵ Эминъ, Исслѣдованія и Статьи, էջ 78:

կիր, լիքն էր ձորերով. որով այս ձորերը, այսինքն լեռնային շղթաներով միմիանցից բաժանուած երկրարաժիւնները՝ բնակչութեան բնական սահմաններն են կազմել⁶:

Գուգարքի մաս էր կազմում մեր պատմիչների յիշած Տաշիրքն, այժմեան Լոսին: Ս. Մեսրոպ 432—435ի միջոցները վրացերէն այբուբէնը տարածելու եւ այս կերպով քրիստոնէութիւնն արմատացնելու նպատակով եկաւ Վերահայր եւս, ուր, ինչպէս գրում է Կորիւն «Իշխանն Տաշրացուց, այրն պատուական եւ աստուածասէր, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա դանձն ամենայն դաւառով» (էջ 31): Նոյնը նաեւ Սորենացին. «Հրաւիրի (Ս. Մեսրոպ) անդէն իր ղեկիչն Գուգարաց Աշուշայէ յազադս նորին զործոյ դալ յիւր իշխանութիւնն ի դաւառն Տաշրաց» (Գ. կ. 258):

Վերահայրէ Տայք դաւառը Հայոց Պատմութեան մէջ մեծ դեր է խաղում, իրբն սահմանակից ամուր վայր, ուր հայ իշխանները յաճախ ապաւինում էին թշնամիների ձեռքից, ինչպէս կարդում ենք Եղիշէի եւ Ղ. Փարպեցու մէջ: Առհասարակ Տայք եւ Կղարքը համբաւաւոր էին իրենց «ամբոցօք եւ բերօք կառուցեալք» ինչպէս գրում է Սորենացին: Մմբատ թագաւոր եւս ապաւինել է «յամուրս քարաժայռ նորոյն Սորփեաց Տայոց» յիշում է Յովհ. կաթողիկոս:

Սորենացին մի հետաքրքրական տեղեկութիւն է տալիս Կովկասեան մի լեռնական ցեղի դէպի Տայք տեղահանութեան մասին, Արշակ Ա.ի օրով: «Աղմուկ մեծ լեալ ի դօտի մեծի լեռինն Կաւկասու յաշխարհին Բուլղարաց, եւ բաղումք ի նոցանէ հաստուածեալք եկին յաշխարհս մեր եւ բնակեցան ներքոյ կողայ, յարդաւանդ եւ ի հացաւէտ տեղիս մինչեւ ի ժամանակս բազումս» (Բ. 8): Այս կողայ դաւառը Տայքի մէջ էր, որ այժմ կոչուում է Գեօլա: Բուն Տայք անունը պահպանուած է վրացերէն Տաուկարի բառի մէջ որ նշանակում է Տայոց դուռ, եւ որ այժմ ժողովրդական արտասանութեան մէջ, «Թաւուկեար» է դարձած:

Տայքի կենդրոնումն էր Սպեր, որ Բադրատունեաց ցեղական կալուածքն է եղած: Հայ բազրատունիներն յիշում են այստեղ արդէն Արտաշէս Բ.ի ժամանակ, 30—20

⁶ Государственный строй Древней Грузии и Древней Армении. Исслѣдованіе И. Джавахова. С.-Пет. 1905.

Ն. Ք.: — ձորոխ գետն, որ հոսում է Տայքի մէջ հայ պատմիչներից կոչուած է Սպերի ջուր կամ գետ:

2. դարի վերջը, Յունաց Մօրիկ կայսեր եւ Պարսից Սոսրով արքայի մէջ կայացած պայմանագրի հիման վրայ (591) Վերահայր անգաւ Բիւզանդական ղերիշխանութեան տակ, բայց ոչ ամբողջապէս: Սոսրով 602ին դարձեալ տիրեց այնտեղ, ոչ երկար ժամանակ: Հերակլ կայսրը 627ին Սասանեանների բանակը ջարդելով Պարսկաստանի իշխանութեան մահացու հարուած տուաւ: Սակայն այս հանգամանքը նոր, աւելի վտանգաւոր թշնամու գործը դիւրացրեց: Գրանից 15 տարի վերջը արարները բուն կերպով արշաւելով հետոհետէ տարածուեցան մինչեւ Կովկասեան լեռնահովիտները: Պարսկաստան սուրի սեան լեռնահովիտները: Պարսկաստան լուծին են սպաննալիքի տակ իսլամութեան լուծին են թարկուեց. այս լուծը տարածուեց նաեւ Վրաստանի արեւելեան մասի վրայ: Վերահայր երկու կենդրոն է ունեցել: Արեւելեան մասում Յուրտաւ, իսկ արեւմտեան մասում, այսինքն Կղարքում՝ Արտաւուզ: Յուրտաւ Գուգարքի բղիշիկ ամրոտապետին է եղած, իսկ Արտաւուզ՝ վրացական Բազրատունեաց: Յուրտաւն անցեալն այսպէս է նկարագրում Ուլտանէն, Ժ. դարում:

«Յուրտաւն այն... այժմ որջորջեալ կոչի Գաշեմի: Յայնժամ լի եւ ընդարձակ մայրաքաղաք մեծ եւ հռչակաւոր, իսկ այժմ փոքրեալ եւ չափաւորեալ քաղաքապետ, յետոյն, որ կոչի յիւր անուն Գաշեմա, որ է ի նահանգին, որ կոչի վրաց Գաշա, որ է միջասահման երկուց աշխարհացն Հայոց եւ Վրաց, հայի հանդէպ լեռին Կաւկասու, որ է սահմանակից հրաշտէն եւ հրաշալի, հռչասահմանակից մեծի մայրաքաղաքին կաւոր եւ տկանաւոր մեծի մայրաքաղաքին Տիլիսեաց, եւ եղեալ Յուրտաւն այն բնակարան բղիշիկն մեծի՝ Գուգարացուց⁷»:

Յուրտաւ, մինչեւ Ն. դարի առաջին քառորդը ոչ միայն Գուգարքի բղիշիկ իշխանութեան մէջ յիշուած իրբն Եկեղեցի: Յուրտաւ իր հայ եւ վրացի խառն բնակչութեան պատճառով ունեցած է թէ ինչպէս վրացի ծագմամբ եպիսկոպոսներ, հայ եւ թէ վրացի ծագմամբ եպիսկոպոսներ, որոնք թէ հայապէտ եւ թէ վրացապէտ են եղած: Երբ Յուրտաւ է. դարում արարական

⁷ Ուլտանէն, Վաղարշապատ 1871, էջ 34:

արշաւանքի ժամանակ քանդուեց, այս եպիսկոպոսական ամրոտն էլ վերջ դատաւ: Ժ. դարում նրան դանում ենք Հաղբատի արքեպիսկոպոսի իրաւասութեան տակ, Վրաստանի սահմաններում:

Արտաւուզի հիմնարկութիւնն այսպէս է պատմուած Վրաստանի Պատմութեան «Քարթլիս Յիստորիայի» մէջ (Գլուխ 2.): Վրաց վախճանից Գորգալաւն մեծ արքան, Ն. դարում Յունաց դէմ պատերազմից ետ է դառնում Կղարքը եւ այնտեղ տեսնում է բարձունքի վրայ մի գեղ, որի ամբողջ երկարութեան վրայ հսկայական ժայռ էր կանգնած իսկ միւս կողմերից էլ ձորով եւ գետակով էր պաշտպանուած: Նա հրամայում է իր կաթն-կղապը Արտաւուզին (Արտաւուզի վրացական ձեւը) որ այնտեղ, ժայռի թեւերի վրայ պարիսպներ կանգնեցնէ եւ գեղն իրբն բերդաքաղաք ամրացնէ: Այս ամրացումից յետոյ Վախթանգի որդիքն իրենց բնակութիւնը հաստատում են այնտեղ:

Քրիստոնէութեան մուտքից յետոյ Արտաւուզի շրջակայքում, առ հասարակ Տայք եւ Կղարքում հաստատուել են նաեւ մեծ թուով եկեղեցիներ եւ վանքեր: Այս վանքերի մեծ մասը նախ հայկական հիմնարկութիւններ են եղած եւ սպա Ը. դարում եւ այնուհետեւ նորոգուելով վրացական կրօնական միարանութիւններին են անցած եւ ծաղկած: Այս մենաստաններում հայ եւ վրացի կրօնաւորներ փոխ ի փոխ զգալի ծառայութիւն են մատուցած իւրաքանչիւրն իր մայրենի գրականութեան, օգտուելով հելլենական գրականութիւնից: Հելլենականութիւնը Տայք-Կղարքի միջոցով է մուտ դտած ոչ միայն Վրաստան, այլ մտտամբ նաեւ Հայաստան: Այստեղ, հելլենականութիւնը մեծապէս ներգործել է թէ Հայոց եւ թէ վրացոց մշակոյթի վրայ, բայց նրանց չէ սողալայնացրել: Թէ հայերը եւ թէ վրացիք պահպանել են իրենց լեզուն եւ ազգայնութիւնը:

ԺԲ. ԳԼՈՒԽ

Վրաց եկեղեցու կապը Հայ եկեղեցու հետ մինչեւ Ն. դար: Կիրիոն՝ վրաց կաթողիկոսն եւ իր գործուհիւրքիւնը: Գաւաբանական վեները Քաղկեդոնի ժողովի շուրջը: Ս. Շուշանիկի պաշտումը վրացերէն: Կիրիոնի՝ Հայոց Մովսէս եւ Արրաւաւ կաթողիկոսների հետ քղրակցութիւնը: Եր-

ի Հայոց էին եւ ումանք ի վրաց, ի Հայս ուսեալք, զիտունք եւ վարդապետք: Նոքա եւ մեր վարդապետք ընդ միմիանս խաղաղութեամբ կային, ի միմիանց ուսանէին եւ զմիմիանս ուսուցանէին: Եւ մեր քան զմեր հարանցն ոչ քողեալ ինչ է եւ ոչ յաւելեալ ի հաւատոյ: Եւ ազատ մարդիկն, որ ի Հայոց, ի վերս խնամութիւն արարեալ էր, ի սրբոց Շուշանկայ պաշտօնն դային եւ ի սուրբ խաչն Մծխիթայի³ աղօթել եւ օրինաց հաղորդէին: Նոյնպէս եւ որ աստի պղբ դային ի Սուրբ կաթողիկէ (Դուին, Հայաստանում) եւ յայլ եկեղեցիսց աղօթել, անխիղճ ի միմիանց օրինաց հաղորդել եւ միաբանութիւն էր վրաց եւ Հայոց ընդ միմիանս: Կիւրիոնի այս պատասխանի մէջ ամփոփուած է այն միութիւնն եւ համերաշխութիւնն, որ դրութիւն է ունեցել Հայոց եւ վրաց մէջ, մինչեւ է. դար:

Ահա այսպէս մինչեւ Կիւրիոնի կաթողիկոսական աթոռը դրաւ ի վրաց եւ վրացիներ համերաշխ դործակցութիւն են ունեցել նոյն իսկ այն սկզբնական դաւանաբանական վեճերի ժամանակ, որ տեղի ունէր Գաղկեդոնի ժողովի պատճառով այլեւայլ երկրներէ քրիստոնէայ համայնքներէ մէջ: Աւելորդ չեմ համարում հարեւանցի մի ակնարկ նետել այդ շրջանի վրայ:

Երբ Անտիոք (Ասորիք), Աղեքսանդրիա (Եգիպտոս) եւ Երուսաղէմ (Պաղեստին) հակառակեցան Քաղկեդոնի Սահմանադրութեան, այն ժամանակ Կ. Պոլսի պատրիարքը Ակակ⁴ Երկու կողմերը հաշտեցնելու դիտաւորութեամբ հրատարակեց Հենոտիկոնը (= Միութեան դիր), որ երկրմաստ մի գրութիւն էր: Նա բոլորովին լուրջեան էր տալիս Քաղկեդոնի ժողովի վճիռը, զգուշանում էր «Երկու բնութիւն» բացատրութիւնից եւ իրեն հաւատոյ սահման անաջարկում էր միայն առաջին երեք տիեզերական ժողովների (Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի) վճիռները:

Բիւզանդական կայսրը Անաստաս Ա. (491—518) Ակակին պաշտպան հանդիսանալով, իր կայսերական իշխանութեամբ պարտադրում էր իր հպատակներին, որ այս «Միութեան դիրն» ընդունին: Այն ժամանակ Հայերը, վրացիներն եւ Աղուանները նոր էին վերջացրել կրօնական պատերազմն եւ սկսել էին ուշադրութիւն դարձնել մերձա-

³ Վրաստանի առաջնութիւն Ս. Նաւեի խաչն, որ պահուած էր Մծխիթայի վրացական Մայր Եկեղեցում:

կայ քրիստոնէայ պետութեան մէջ տեղի ունեցած կրօնական վեճերին: Ուստի երբ Անտիոքից Հայաստան հասաւ Հենոտիկոնի հայերէն թարգմանութիւնը, Հայերը անտարբեր չդտնուեցան: Բայ ի Անտիոքի եկեղեցական հեղինակութիւնից, այս պարագայում մեծ դեր է կատարել մանաւանդ Անաստաս կայսեր վերաբերմունքը: Անաստաս մեծ հռչակ էր վայելում Հայաստանում, շնորհիւ այն յաղթութեան, որ նա տարել էր Պարսից դէմ, ուստի Բարսէն կաթողիկոս, Անաստասի ինդրանքին իսկոյն ընդ առաջ է դնում եւ բաղամարդ ժողով է գումարում Նոր Քաղաքի, այսինքն Վաղարշապատի Մայր Եկեղեցում: Այս ժողովին մասնակցեցին ոչ միայն հայ հոգեւորականութեան պետերն եւ նախարարներ այլ նաեւ վրաց կաթողիկոսը Գաբրիէլ եւ 33 վրացի հոգեւորական: Ժողովը որոշեց ընդունել Անաստաս կայսեր անաջարկութիւնն եւ ստորագրել Հենոտիկոնը: Այս կերպով Հայք, վրացիք եւ Աղուանք ընդունում էին «Հոռոմոց» վարդապետութիւնն, այսինքն շարունակում էին Յունաց հետ իրենց հաւատքի միութիւնը: Վաղարշապատի այս եկեղեցական ժողովի անդամները ստորագրում են իրենց «հաւատոյ թուղթը» որ յետոյ «պայլման նամակ» կոչուում է կրած, եւ գրուած էր հայերէն եւ վրացիերէն, եւ նոյնը յունարէնի թարգմանելով ուղարկում են կայսեր:

Մինչ այս՝ հանդամանքները փոխուել էին Կ. Պոլսում: Հենոտիկոնի հետեւողները, որոնք յայտնի են իրեն Ակակեան հերձուածողներ, արդէն քաշուել էին ասպարէզից: Հերձուածը տեսել էր միայն 35 տարի (484—519): Անաստասի յաջորդող կայսրները մերժել էին Հենոտիկոնն եւ վերականգնել Քաղկեդոնի ժողովի հեղինակութիւնը: Մօրիկ կայսրը հրաման էր հանել այս մտքով եւ անհնազանդներին հարածում էր: Սերէոս վկայում է, որ կայսեր հրամանով, Քաղկեդոնի ժողովը չընդունողներին կոչկոծումի, ծեծի եւ այլ սցսպիսի մարմնական պատիժների էին ենթարկում, որով Հենոտիկոնի կուսակիցներից շատերը ստիպուել են իրենց երկրից փախուտ տալ եւ աւելի ազատ տեղեր ապաւինել: Այս հալածանքներն այն հետեւանքն ունեցան, որ պարսկական բաժնի հայերն ուժացան յոյներից եւ յարեցան Ասորիքին, ուր հակաքաղկեդոնական հոսանքն ամուր հիմք էր դրել: Հայոց կաթողիկոսները, Ներսէս Բ. Աշտարակեցի (548—557),

Յովհ. Բ. Գաբրիէլեցի (557—574) եւ նրանց յաջորդները հաստատ մնացին Վաղարշապատի վերոյիշեալ ժողովի որոշման վրայ, այսինքն Հենոտիկոնի սկզբունքին կողմնակից մնացին, ի բաց թողնելով Քաղկեդոնի ժողովը: Այդպէս չլարուեցան, սակայն, Յունական բաժնի հայերը, մասնաւորապէս Վիրահայք, որոնք մեծ մասամբ հնադանդեցան Կ. Պոլսից եկած նոր պատուէրին եւ Հենոտիկոնը մերժելով յարեցան Քաղկեդոնի ժողովի վճիռն: Սակայն այս յարուճումն երկար չտեսեց: Երբ քաղաքական հանգամանքները բերմամբ Հայաստանի յունական բաժնին եւս անցաւ Պարսից գերիշխանութեան տակ եւ այնտեղի հայերն այս կերպով հետացան կամ զրկուեցան թեւապահական հովանաւորութիւնից, նրանք էլ միացան պարսկական բաժնի հակաքաղկեդոնականներին:

Երկու մասնակի դէպք եւս դժուութիւն են պատճառել Կիւրիոնի եւ Հայոց կաթողիկոսի միջեւ: Առաջինը խուժիկ նեստորականներին ինդիկն է: Խուժիկները ասորի էին, որոնք Զ. դարում վրաստան եւ Հայաստան գալով նեստորականութիւն էին քարոզում եւ այս նպատակով հայերէն եւ վրացիերէն դրուածքներ էին ցրում: Երբ Կիւրիոն կաթողիկոս դարձաւ, խուժիկներն արդէն հաստատուել էին վրաստանում: Ինչպէս որ կէս դար յառաջ Ներսէս Բ. կաթողիկոսը իրաւ միջոցներով նրանց հեռացրել էր Հայաստանից, Կիւրիոնն եւս նրա օրինակին հետեւելով միջոցներ ձեռք առաւ նրանց դէմ տեսնում: Բայց այս խուժիկներից ոմանք զղջալով վերադարձել էին վրաց Եկեղեցին: Հարց էր ծագել թէ այսպիսիներին պէ՞տք էր նորից միկրտել: Որովհետեւ եկեղեցական էր նորից կարծիքները բաժանուած էին, չըջանում կարծիքները բաժանուած էին, ուստի Կիւրիոն լուսաւոյն համարեց զիմել այս մասին ուղղակի շոտմ: Այն ժամանակ կաթողիկ Եկեղեցու դահակալն էր Մեծն Գրիգոր Ա. (590—604), որ մեծ հռչակ էր վայելում Արեւելքում, որովհետեւ թղթակցութեան մէջ էր Արեւելքի եկեղեցական պետերի հետ, համակրում էր սրանց եւ օգնութիւն էր հասցնում Արեւելքից եկած ուխտիւն էր հասցնում Արեւելքից եկած ուխտիւններին եւ առ հասարակ արեւելեան կրօնաւորներին, որոնց թուում նաեւ վրացիներին: Կիւրիոն, բացի զրանից, անձամբ համակրող էր եղած կաթողիկ Եկեղեցուն, Գեո եւս այն ժամանակ երբ սովորում էր Նիկիոս եւս այն ժամանակ երբ սովորում էր Նիկիոսում: Ուստի նա նամակ է ուղարկում

Հոտմ եւ հարցնում է թէ պէտք էր կրկին միկրտել թէ ոչ: Պատի պատասխանը պահուած է իր նամակների ժողովածոյն մէջ: Մեծն Գրիգոր հրահանգում է թէ «ի սրտ գղջացողներին պէտք է ընդունիլ առանց կրկին միկրտելու»:

Այդպիսի նախանձախնդրութեան տեսակէտից շատ աւելի կարեւոր եւ հետաքրքրական երկրորդ դէպքը: Արբահամ մեղադրում է Կիւրիոնին թէ «ի՞նչ իրաւամբ դաշտօն հայերէն՝ սրբոյն Շուշանկան զկարգաւորեալն, լսեմ թէ ի բաց փոխիցէք: Մեղ մահու չափ եւ եւս չարագոյն թուեցաւ զործոյ պոք»: Շուշանիկ ծննդեամբ հայ բայց ամուսնութեամբ վրացի էր դարձել քանի որ վրացի իշխանի կինն էր, Գուգարբի բղէչս Աշուշայի որդի Վաղէնի: Նա իրեն քրիստոնէութեան համար զոհուած, հաւատարապէս յարգուած եւ պաշտուած էր թէ հայերից եւ թէ վրացիներից: Նրա պաշտումը նախ միայն հայերէն էր կատարում, բայց Զ. դարում Կիւրիոնի կարգադրութեամբ վրացիքն եւս էր կատարում, քանի որ Յուրտաւ վրաստանի թեմ էր եւ բնակիչներն մէջ մեծ թուով վրացիք եւս կային, որոնք սակայն հայերէն էին հասկանում եւ ուզում էին իրենց լեզուով պաշտել նրան:

Ուստի Կիւրիոնի համար դժուար չէ լինում այս մեղադրանքը հերքել: Կիւրիոն իր անխորական ողին ապացուցանելու համար աւելացնում է թէ Յուրտաւի համար իր նշանակած նոր եպիսկոպոսը «վրացի ուսումն գիտ էր հայ, եւ երկուսումը դպրութեամբ պաշտօն կատարի»: Այս մասին Կիւրիոնի դէմ Յուրտաւի նախորդ հայ եպիսկոպոսն, Մովսէս էր դանդաղուել Արբահամին: Կիւրիոն սաստիկ նեղացել է Մովսէսի դէմ, որին ինքն էր ձեռնադրել Յուրտաւի վրայ եւ որ սակայն դադանորէն թղթեր է գրել Արբահամին Կիւրիոնի «քաղկեդոնականութեան» մասին: Մովսէս ստիպուել է թողնել վրաստանն եւ փախչիլ Յունական բաժնին, ուր ապաստանում է Յովհ. Մկրտչի վանքը «յոսին Արագածու»:

Երբ Հայոց եւ վրաց կաթողիկոսները մէջ յարաբերութիւններն այսպէս լարում են, Սմբատ Բագրատունին⁴ հարկ է համա-

⁴ Սմբատ Բագրատունի, հայ նախարար, վրկանի կամ Գուրկան մարզպան էր Պարսից արքայի կողմից նշանակուած: Այս հայ գործադրը Պարսկաստանի հիւսիսային սահմանները մտքել էր թշնամիներից եւ այնուհետեւ արքայից արքան նրան «Արեւոյ Տէրութեան մարզպանից դերագոյնը» տիտղոսով պահել է իր

